Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԱՆ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան -2 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04. - 31.06.2024թ. |
| Ներկայացման օր | 08.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br><br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br><br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.07.08
14:16:56 AMST

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 75 շահառուի Նոր Նորք և Ավան համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 16 դեպքի վարում (թվով 6 ձեռք է բերվել անձնագիր կամ նույնականացման քարտ, 8 վերափաստագրում, 2 աջակցող պարագաներ քայլակ և սայլակ):
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 2 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 2 միջոցառում (Երևան բալետ ֆեստ՝ Թումանյանի այգի Սանկտ Պետերբուրգի Բ. Էյֆմանի բալետի ներկայացում, Երևանի քաղաքապետարանի կողմից հատուկ հրավիրված և Հայաստանի կույրերի միավորման Ս. Շահնազարյանի անվան մշատույթի տան դահլիճ՝ Կույրերի միավորման երգչախմբի և ժող գործիքների նվագախմբի համերգը՝ նվիրված երաժշտության օրվան), որոնց մասնակցել է 3 շահառու.
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 75 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 75 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի

իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 50 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 11 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: 1 կատարվել է վերքի մշակում, վիրակապի փոխում), 16 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 7 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական), 1 շահառուի համար կատարվել է երակային ներարկում (շարունակական): 75 շահառուի համար կատարվել է օքսիմետրիա և ճնշման չափում, 7 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, 9 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է ուղեգիր հսկող բժշկի կողմից նշանակված, որի արդյունքում շահառուն ստացել է համապատասխան անվճար հետազոտություններ:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Երևանի քաղաքապետարանի հրավիրմամբ Ակրամ Խան ժիզել բալետ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/dnzbpy )

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Աշխատանքներն իրականացնելու ընթացքում կապված ՖՄԴ-ի գնահատումների ԲՍՓՀում տեղի ունեցած փոփոխությունների դժվարություններ են առաջացել տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար աջակցող պարագաների ձեռք բերման հետ կապված:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ի կողմից կազմակերպված «Տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների տրամադրում», «Դեպքի վարման առանձնահատկությունները» թեմայով դասընթաց, մասնակցել են Նոր Նորք և Ավան համայնքները սպասարկող սոցիալական աշխատողները
- WHO, UN-DESA and INPEA –ի կողմից կազմակերպված «Տարեցների նկատմամբ վատ վերաբերմունք» թեմայով վեբինարի, մասնակցել է Նոր Նորք և Ավան համայքները սպասարկող թիմի սոցիալական աշխատանքի սուպերվիզորը
- Շվեյցարիայի Լյուցեռնի համալսարանի և Հայաստանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի միջև համագործակցության

արդյունք է, որին օժանդակում են մի շարք գործընկերներ, այդ թվում ԱՀԿ եվրոպական և հայաստանյան գրասենյակները «Վերականգնողական ծառայությունների միջոցով առողջ ծերացման խթանումը Հայաստանում» առողջապահական համակարգի ուսուցման մոտեցման կիրառմամբ, մասնակցել է Նոր Նորք և Ավան համայքները սպասարկող թիմի սոցիալական աշխատանքի սուպերվիզորը

- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից կազմակերպված «Տարեցների սոցիալական աջակցության ծառայությունների մեթոդաբանական ասպեկտները», «Հումանիտար և զարգացման համատեքստում տարեցներին աջակցելու լավագույն միջազգային փորձը», մասնակցել է Նոր Նորք համայնքը սպասարկող սոցիալական աշխատողը
- Ֆոկուս խմբի «ՖՄԴ-ի կոռուպցիոն ռիսկերը» մասնակցել են Նոր Նորք և Ավան համաքները սպասարկող թիմի սոցիալական աշխատողն ու սուպերվիզորը

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75/74 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 63 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 69 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –0<br>Բ - 74 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 74 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 74 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 74 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 3 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 16 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 2 |

Կազմակերպության ղեկավար ___Երվանդ Մխիթարյան__
(ստորագրություն, անուն,ազգանուն)

«_08_» _07._2024թ